# ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ներքին աուդիտի ծառայություն**

## 1. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության բարելավմանը և ընդգրկում է Հանձնաժողովի գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները և Հանձնաժողովի գործունեության արդյունքները, այսինքն՝ Հանձնաժողովի ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները, գործընթացները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրներ, որի մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝ Կատարող) պետք է՝

- ✓ նկարագրի ներքին աուդիտի իրականացման հիմնական ոլորտները, աուդիտի ենթակա ստորաբաժանումների մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև աջակցությունը,
- ✓ Հանձնաժողովի նախագահին (այսուհետ՝ Նախագահ) պատշաճ գնահատական ներկայացնի Հանձնաժողովի ներքին հսկողության համակարգի համապատասխանության, հուսալիության և արդյունավետության մասին,
- ✓ գնահատի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը՝ Նախագահի կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը,
- ✓ Հանձնաժողովի կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման (ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման) գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով աջակցի Հանձնաժողովին վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում,
- ✓ հավաստիացնի Հանձնաժողովի նախագահին և ներքին աուդիտի կոմիտեին, որ Հանձնաժողովի ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդնումը և պահպանումը),
- ✓ օժանդակի Հանձնաժողովին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
- ✓ օբյեկտիվ կարծիք տրամադրի վերահսկող մարմիններին Նախագահի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ,
- ✓ օժանդակի Նախագահին հասնել իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով Հանձնաժողովի համակարգերը և ծառայությունները,
- ✓ իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
- ✓ ապահովի աուդիտորների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին,
- ✓ ապահովի իր առնվազն մեկ աշխատակցի մշտապես ներկայությունը Հանձնաժողովում, որը պատասխանատու է ներքին աուդիտի օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջների կատարման համար,
- ✓ ապահովի «Ներքին աուդիտի մասին» օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների

կատարումը,
- ✓ կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները,
- ✓ հաշվետու լինի Նախագահին և ներքին աուդիտի կոմիտեին,
- ✓ բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառույթներից, չիրականացնի կազմակերպության կառավարման որևէ գործառույթ:

Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքերի արդյունքները պետք է ընդունվեն ի գիտություն և հաշվի առնվեն հետագա աշխատանքներում:

## 2. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կատարողը պետք է գնահատի Հանձնաժողովի ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է Հանձնաժողովի ամբողջ համակարգը, ընդգրկում Հանձնաժողովի աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի Հանձնաժողովի կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները՝ (Գործառույթը կամ գործընթացը Հանձնաժողովի նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է):

Աուդիտի միջավայրի տարրերը, որոնք կոչվում են միավորներ (այսուհետ՝ Միավորներ), ներառում են.

1) հիմնական և աջակցող ստորաբաժանումները (վարչությունները, բաժինները),

2) այլ ստորաբաժանումները, գործընթացները, ծրագրերը:

## 3. ՁԵՌՔԲԵՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումը այնպիսի ժամկետներում, որպեսզի մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ապահովի սույն տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը.

2) Սույն բաժնի 1-ին կետով սահմանված պարտականության կատարման նպատակով Կատարողը պարտավոր է.

ա) կազմել և Նախագահի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգը և դրա փոփոխությունները, որում անհրաժեշտ է սահմանել այն դրույթները, որոնք ենթակա են պարտադիր կատարման ողջ Հանձնաժողովի համար և պետք է արտացոլեն աուդիտի իրականացման բոլոր փուլերը և այն հարցերը, որոնք նպաստում են ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև Միավորների կողմից իրականացվող այն գործառույթները, որոնք ենթակա են ներքին աուդիտի.

բ) ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Նախագահի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա կազմել ներքին աուդիտի երեք տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները (ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում Հանձնաժողովում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները), հստակ նշելով ներքին աուդիտի ենթակա Միավորների քանակը, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտների ժամկետները (հաճախականությունը), ելնելով առկա ռեսուրսներից աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները, որն էլ ելակետային հիմք կդառնա ռազմավարական ծրագրում ընդգրկված հաջորդող տարիների համար ներքին աուդիտի ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնման ընթացակարգին գնային առաջարկի ներկայացման համար.

գ) իրականացնել արդյունավետ ներքին աուդիտ՝ գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

- Հանձնաժողովի նախագահի կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում, մասնավորապես՝ Նախագահի կողմից կատարված ռիսկերի գնահատման հավաստիությունը, Նախագահի կողմից իրականացվող ռիսկերի դիտարկումը և արդյունքների ներկայացումը, ինչպես նաև ռիսկերի և հսկողության համակարգի հետ կապված խնդիրների լուծումը, Նախագահի կողմից ներկայացված հաշվետվություններն այն դեպքերի վերաբերյալ, երբ ռիսկերը գերազանցել են դրանց ընդունելի միջակայքը, և այդ հաշվետվություններին Հանձնաժողովի ստորաբաժանումների ղեկավարների արձագանքը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,
- տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,
- տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,
- կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,
- առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

դ) տրամադրել.

- հավաստիացում առ այն, որ Հանձնաժողովում առկա կառավարչական և իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացները համապատասխանում են/չեն համապատասխանում/մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին.
- հաստատում առ այն, որ ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են/չեն գործում արդյունավետ կերպով.
- հավաստիացում առ այն, որ ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները հուսալի են/հուսալի չեն.
- հաստատում առ այն, որ Նախագահը Հանձնաժողովի այլ պաշտոնատար անձանցից ստանում է/չի ստանում/մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն.
- առաջարկություններ՝ ուղղված հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի բարելավմանը և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկմանը,
- եզրակացություն ենթակա Միավորների նկատմամբ հսկողության վերաբերյալ,
- եզրակացություն Հանձնաժողովի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մակարդակով և ընդհանուր համակարգի հսկողության վերաբերյալ,
- եզրակացություն կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի վերաբերյալ, եթե այդ հսկողությունն էական է Հանձնաժողովի նպատակների իրագործման համար.

ե) կազմել և Նախագահին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները.

- իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ, որը կներառի՝ ինչպիսի աշխատանք է կատարվել և որն է այդ աշխատանքների կատարման պատճառը, ներքին աուդիտի շրջանակներում հայտնաբերված բոլոր բացահայտումները և եզրակացությունները, կառուցողական առաջարկություններ՝ Հանձնաժողովի գործունեությունը բարելավելու հարցում՝ Նախագահին օգնելու նպատակով.
- ներքին աուդիտի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն.
- տարեկան առնվազն մեկ անգամ ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները.

զ) իրականացնել վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող Միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման

գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով և պարզելու թե արդյոք աուդիտի ենթարկված Միավորի Ղեկավարը ձեռնարկել է իրավիճակը շտկող գործողություններ կամ իրագործել է ներկայացված առաջարկությունները, ձեռք են բերվել ցանկալի արդյունքները, թե Ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն իրենց վրա են վերցրել առաջադրանքի արդյունքներից բխող միջոցառումների չիրականացման ռիսկերը: Վերստուգման գործողությունները պետք է պատշաճորեն փաստաթղթավորվեն:

Կատարողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն առաջարկություններին, որոնց մասով ղեկավարությունն ստանձնել է մնացորդային ռիսկ, և պատշաճ կերպով փաստաթղթավորի այդ դեպքերը.

է) կազմակերպել աշխատանքային փաստաթղթերի պատշաճ փաստաթղթավորում և պահպանում.

ը) կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը, որը Նախագահին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագարգիռ կողմերին կտրամադրի հիմնավորված հավաստիացում, որ ներքին աուդիտը գործում է արդյունավետ և օգտավետ, իր կանոնակարգի համաձայն, որն իր հերթին համապատասխանում է «Ներքին աուդիտի մասին» օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին, ինչպես նաև ներքին աուդիտը դիտվում է որպես Հանձնաժողովի գործառնությունները բարելավող գործունեություն.

3) ներքին աուդիտի համագործակցությունը այլ ներքին և արտաքին հավաստիացումներ տրամադրողների հետ.

ա) կատարողը պետք է համագործակցի ներքին հավաստիացումներ տրամադրողների հետ՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և գործողությունների կրկնությունը բացառելու նպատակով.

բ) Նախագահի հանձնարարությամբ Կատարողը պետք է համագործակցի Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում օրենքով սահմանված կարգով հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի հետ՝ նրանց աջակցելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

4) Կատարողը պետք է իրականացնի ներքին աուդիտ՝ հավաստիացման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով:

Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցությամբ:

Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվ ակտեր և այլն) Հանձնաժողովի գործունեության համապատասխանությունը պարզելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին Հանձնաժողովի գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից:

Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

## 4. ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կատարողը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ որպես «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին) պետք է տրամադրի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հետևյալ տեղեկատվությունը.

ա) «Ներքին աուդիտի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված Լիազոր մարմնի կողմից հրապարակված ցանկում ընդգրկվելու համար ներկայացված տեղեկություններում կամ փաստաթղթերում, այդ թվում՝ Կատարողի կամ դրա աշխատող համարվող ներքին աուդիտորների մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում այդ փոփոխությունների մասին տեղեկատվություն՝ դրանք ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում.

բ) ներքին աուդիտորներին վերապատրաստելու անհրաժեշտության և վերապատրաստման ծրագրի ուղղվածության մասին առաջարկություններ.

գ) ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ի գիտություն.

դ) հաջորդող տարվա տարեկան ծրագիրը՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 1-ը.

ե) հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով՝ ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

զ) ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը.

է) Հանձնաժողովի կողմից հաստատված ներքին գնահատման ստուգաթերթերը և հարցաշարերը ու դրանցում կատարված փոփոխությունները՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

ը) ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ցանկալի է տարեկան ամփոփ հաշվետվության հետ մեկտեղ:

## 5. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ա) Կատարողը պետք է ընդգրկված լինի Լիազոր մարմնի կողմից վարվող՝ հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում,

աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրը հասանելի է հետևյալ հղմամբ՝

***https://minfin.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerpu-tyunneri_miasnakan_reestr***

բ) Կատարողի՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր,

գ) Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմելուց և անհրաժեշտ մարդկային ռեսուրսները հաշվարկելուց հետո՝ Կատարողն, անհրաժեշտության դեպքում, կարող է ներգրավել բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ: Նշվածի համար կատարողը պետք է ունենա ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող, բավարար քանակությամբ

մարդկային ռեսուրսներ՝ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի ռիսկերի գնահատման արդյունքներով կազմված ռազմավարական և տարեկան ծրագրերը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Կատարողը ներքին աուդիտի աշխատանքները պետք է կատարի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան և պահպանի ներքին աուդիտորի վարքագծի կանոնները:

***Կատարողը կնքվելիք պայմանագրով ստանձնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պարտավորությունները (ղեկավարվելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից հաստատված «Ներքին աուդիտի 2026-2028 թվականների ռազմավարական ծրագիր»-ով), որն ընդգրկում է 2026 թվականի ժամանակահատվածն ամբողջությամբ վերցրած :***

## 6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կնքվելիք պայմանագրով ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է առնվազն 12 ամիս, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

Հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ մինչև հաջորդող առաջին ամսվա 15-րդ օրը: Հաշվետվությանը կից ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում մատուցված ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորման արդյունքը, ինչպես նաև գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է 5-րդ բաժնի բ) կետում նշված չափանիշներին բավարարող աշխատանքային ռեսուրսների կողմից:

Պատվիրատուի կողմից հաշվետվությունը քննարկվում և հաստատվում կամ առարկություններով կատարողին վերադարձվում է այն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը հաստատվում է Հանձնաժողովի նախագահի որոշմամբ, որի հիման վրա այն կայացվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

Մատուցված ծառայության դիմաց վճարումներն իրականացվում են յուրաքանչյուր անգամ ներկայացված հաշվետվությունը հաստատվելու դեպքում՝ պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված ամսին:

Ընդ որում, եթե պայմանագրի գործողության ժամկետը չի ավարտվում տվյալ բյուջետային տարվա ընթացքում, ապա ծառայությունների մատուցման շարունակությունն ապահովելու նպատակով հաջորդող բյուջետային տարում կնքվող համաձայնագրով նախատեսվում է նաև, որ դրա պահանջները կիրառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա, իսկ վճարումն իրականացվում է այդ տարում ծառայության ձեռքբերման համար նախատեսված հատկացումների հաշվին:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

## 8. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները սահմանված են ՀՀ Սահմանադրության 196-րդ և 197-րդ հոդվածներով, «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 19-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 32-Լ որոշմամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով,

2) Հրավերով կարող է սահմանվել նաև, որ մասնակիցը գնային առաջարկին կից ներկայացնում է ծառայության մատուցման առանձին տարրերի միավոր գներ.

3) Կատարողին կտրամադրվեն Հանձնաժողովի ներքին աուդիտի օրենսդրությունից բխող ներքին իրավական ակտերի օրինակները.

4) Կատարողին կտրամադրվեն Հանձնաժողովի տարեկան և եռամյա ռազմավարական ծրագրերը.

5) Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ թվում հետևյալ իրավական ակտերով.

1. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք.
2. ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշում.
3. ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N 974-Ն հրաման.
4. ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրաման.
5. ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012թ. N 165-Ն հրաման.
6. ՀՀ կառավարության 31.05.2012թ. N 732-Ն որոշում.
7. ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N 1050-Ն հրաման.
8. ՀՀ ֆինանսների նախարարի 12.12.2012թ. N 1096-Ն հրաման.
9. ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշում.
10. ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշում.
11. ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրաման:

## 9. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՂՅՈՒՍԱԿ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ/ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ներքին աուդիտի ենթակա Միավորներ | | | Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի ենթակա Միավորներ | | | |
| Անվանում | | Հասցե | Անվանում | | Հասցե | Ռիսկային խումբը |
| 1 | Ծրագրերի մոնիտորինգի բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 1 | Ծրագրերի մոնիտորինգի բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | զգայուն |
| 2 | Վերահսկողության բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 2 | Վերահսկողության բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | զգայուն |
| 3 | Իրավական ապահովման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 3 | Իրավական ապահովման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | միջին |
| 4 | Լիցենզավորման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 4 | Լիցենզավորման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | բարձր |
| 5 | Միջազգային կապերի, հասարակայնության հետ կապերի և զարգացման ծրագրերի բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 5 | Միջազգային կապերի, հասարակայնության հետ կապերի և զարգացման ծրագրերի բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | միջին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Քարտուղարություն | ք. Երևան, Իսահակյան 28 | 6 | Քարտուղարություն | ք. Երևան, Իսահակյան 28 | միջին |
| 7 | Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 7 | Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | բարձր |
| 8 | Անձնակազմի կառավարման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 8 | Անձնակազմի կառավարման բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | միջին |
| 9 | Գործերի կառավարչություն | ք. Երևան, Իսահակյան 28 | 9 | Գործերի կառավարչություն | ք. Երևան, Իսահակյան 28 | զգայուն |
| 10 | Տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | 10 | Տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժին | ք. Երևան, Իսահակյան 28 | բարձր |

# Предоставление услуг внутреннего аудита

## ТЕХНИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА

**Описание предоставленых услуги**

**Услуг внутреннего аудита Комиссии по телевидению и радио**

### 1. РАМКИ ВНУТРЕННЕГО АУДИТА И ОБЩИЕ ТРЕБОВАНИЯ К ОБСЛУЖИВАНИЮ

Внутренний аудит Комиссии по телевидению и радио РА (далее – Комиссия) - это независимая, объективно удостоверяющая и консультативная деятельность Комиссии, направленная на улучшение ее работы и включает результаты деятельности Комиссии и все относящиеся к ее деятельности функции.

Реализация всей системы внутреннего контроля Комиссии, включающая все операции, ресурсы, услуги, процессы, программы и задачи, вытекающие из других правовых отношений Комиссии возлагается на лицо, специально приглашенное для оказания этих услуг (далее - Исполнитель).

Исполнитель должен:

- описать основные сферы реализации внутреннего аудита, особенности участия и поддержки подлежащих аудиту подразделений;
- предоставлять Председателю Комиссии (далее - Председатель) надлежащую оценку соответствия, надежности и эффективности системы внутреннего контроля Комиссии;
- оценивать системы финансового управления и контроля: полноту установленных Председателем правил (политик), процедур и действий;
- содействовать Комиссии в эффективной реализации целей Комиссии посредством систематизированной и отрегулированной оценки и улучшения управленческих процессов Комиссии, системы внутреннего контроля и управления рисками (выявление, оценка и мониторинг рисков);
- заверить Председателя Комиссии и Комитет по внутреннему аудиту в том, что руководители подразделений Комиссии надлежащим образом выполняют возложенные на них обязанности в части внедрения и сохранения систем внутреннего контроля, управления рисками и управленческих процессов;
- содействовать Комиссии быть подотчетным перед общественностью, оценивая выполнение требований и полезность и эффективность осуществленных действий, установленных законами и иными правовыми актами;
- предоставлять надзорным органам объективное мнение о достоверности точности представленных Предедателем отчетов о финансовой и иной деятельности Комиссии;
- содействовать Председателю в достижении поставленных перед ним целей путем улучшения систем и услуг Комиссии;
- снизить своим присутствием вероятность возникновения случаев мошенничества, растраты или других злоупотреблений;
- обеспечивать соответствие поведения аудиторов установленным правилам поведения;
- обеспечивать постоянное присутствие на территории Комиссии хотя бы одного своего сотрудника, ответственного за выполнение всех требований, предусмотренных законодательством о внутреннем аудите;
- обеспечивать выполнение прав и обязанностей подразделения аудита и его руководителя, определенных Законом РА о «Внутреннем аудите»;
- выполнять обязанности секретаря Комитета внутреннего аудита;
- быть подотчетным Председателю и Комитету внутреннего аудита;
- не выполнять никаких функций управления организации, кроме управленческих функций внутреннего аудита.

Результаты предыдущей аудиторской работы должны быть приняты к сведению и учтены в дальнейших работах.

## 2. ПОДЛЕЖАЩАЯ ВНУТРЕННЕМУ АУДИТУ СРЕДА

Исполнитель должен оценивать среду внутреннего аудита Комиссии, которая охватывает всю систему Комиссии, включая все возможные аудиторские функции, задания и подлежащие аудиту процессы. На этапе организации своей работы Исполнитель прежде всего должен четко определить структуру Комиссии, функции ее элементов и их описание: (функция или процесс - это совокупность последовательных и взаимосвязанных действий, условий их выполнения и необходимых ресурсов, направелнных на достижения целей Комиссии).

Элементы среды аудита, называемые единицами (далее - Единицы), включают:

**1) основные и вспомогательные подразделения (управления, отделы),**

**2) иные подразделения, процессы, программы.**

## 3. ОПИСАНИЕ ПРИОБРЕТАЕМОЙ УСЛУГИ

1) С момента вступления в силу Договора Исполнитель обязан предпринимать выполнение предусмотренных законодательством об аудиторской деятельности действий в такие сроки, чтобы до истечения срока действия Договора обеспечить предоставление услуг внутреннего аудита, определенных настоящей Технической характеристикой и законодательством об аудиторской деятельности.
2) Для выполнения обязанности, определенной в пункте 1 настоящего раздела, Исполнитель обязан:

а/ составлять и представлять Председателю на утверждение Положение внутреннего аудита и поправки (изменения) к нему. В этом документе необходимо определять те положения, которые являются обязательными для выполнения со стороны Комиссии и должны отражать все этапы аудита и вопросы, которые способствуют организации деятельности внутреннего аудита, а также подлежащие внутреннему аудиту функции подразделений Комиссии.

б/ в соответствии с порядком, установленным законодательством Республики Армения об аудиторской деятельности, а также на основании поставленных Председателем задач, разрабатывать стратегическую программу внутреннего аудита на 3 года и соответствующие ей годичные программы.

Программы составляются на основе оценок Комиссии о необходимости проведения аудита (оценки рисков, заключения предыдущих внутренних аудитов Комиссии, выявленные проблемы, представленные предложения, предпринятые по ним действия, отчеты об их выполнении), с четким указанием количества подлежащих аудиту Единиц, сфер, сроков и частот аудитов, средств аудита, выбранных для эффективного достижения целей аудита (с учетом имеющихся ресурсов),которые станут отправной точкой подачи ценового предложения на процедуру закупок, которая будет организовываться для приобретения внутреннего аудита на последующие годы, включенные в стратегический план внутреннего аудита.

в/ провести эффективный внутренний аудит, оценивая эффективность систем финансового управления и контроля и их соответствие следующим условиям:

- выявление, оценка и управление рисков со стороны Председателя, в частности: достоверность проведенных Председателем оценок рисков, проводимых Председателем мониторинг рисков и представление результатов, а также решение проблем, связанных с рисками и системой контроля, представленные Председателем отчеты о случаях, когда риски превышали допустимый диапазон и отзывы руководителей подразделений Комиссии на эти отчеты;
- соответствие законодательству Республики Армения и другим условиям, относящихся деятельности Комиссии (договоры, ведомственные нормативные акты и др.);
- бережливые, эффективные и полезные функции;
- доверительность и целостность информации;

- надежность защиты активов и ресурсов от потерь, убытков и злоупотреблений;
- выполнение заданий и достижение целей.

г/ предоставлять

- удостоверение о том, что текущие управленческие процессы и процессы управления рисками в Комиссии соответствуют /не соответствуют/частично соответствуют целям выявления и мониторинга значительных рисков.
- подтверждение о том, что встроенные внутренние контролирующие системы работают/не работают эффективно.
- удостоверение о том, что процессы отчетности об управлении рисками надежны/не надежны.
- подтверждение о том, что Председатель от других должностных лиц Комиссии получает/не получает/ частично получает достоверную и надлежащего качества информацию.
- предложения, направленных на улучшение контролирующих систем и процедур управления рисками, а также устранение недостатков, выявленных в контролирующих системах;
- заключение о контроле над подчиненными Единицами,
- заключение по контролю общей системы, а также на уровне структурных и обособленных подразделений Комиссии;
- заключение по системам контроля подрядчиков или поставщиков услуг, если такой контроль значителен для достижения целей Комиссии;

д/ составлять и представлять в Комитет по внутреннему аудиту и Председателю отчеты, предусмотренные законодательством об аудиторской деятельности.

- периодические отчеты о результатах выполненных аудиторских заданий, которые содержат данные о том, какие работы и по какой причине были проделаны, все выводы и выявления, нахденные в рамках внутреннего аудита, конструктивные предложения по улучшению работы Комиссии с целью оказания помощи Председателю;
- годовой отчет о результатах деятельности внутреннего аудита;
- отчет о реализации программы улучшения и гарантирования качества внутреннего аудита не реже одного раза в год, включая результаты внутренней оценки, необходимые планы действий, результаты их выполнения;

е/ осуществлять процесс ревизии для оценки соответствия, эффективности и своевременности действий по исправлению руководством аудируемой Единицы выявленных в процессе аудита недостатков с целью определения того, предпринял ли руководитель аудируемой Единицы корректирующие действия по исправлению ситуации или реализации представленных предложений, были ли достигнуты желаемые результаты и приняли ли руководитель Единицы и Комитет внутреннего аудита на себя риск невыполнения мероприятий, вытекающих из результатов заданий. Действия ревизии должны быть надлежащим образом задокументированы.

Исполнитель должен обратить особое внимание на рекомендации, по которым руководство приняло на себя остаточный риск и должным образом задокументировать эти случаи.

ж/ организовывать надлежащим образом задокументирование и хранение рабочих документов;

- отчет о реализации программы улучшения и гарантирования качества внутреннего аудита не реже одного раза в год, включая результаты внутренней оценки, необходимые планы действий, результаты их выполнения;

з/ разрабатывать программу улучшения и гарантирования качества внутреннего аудита, обеспечивать ее выполнение, что предоставит Председатею, Комитету по внутреннему аудиту и другим заинтересованным сторонам обосонованную уверенность в том, что внутренний аудит согласно своему положению действует эффективно и полезно, которая, в свою очередь, соответствуют Закону об аудиторской деятельности, стандартам и правилам поведения, а так же внутренний аудит рассматривается как деятельность по улучшению работы Комиссии.

3) Сотрудничество внутреннего аудита с другими поставщиками внутренних и внешних гарантий;

а/ исполнитель должен сотрудничать с поставщиками внутренних гарантий, с целью получения

необходимой информациию и избежания дублирования действий;

б/ по поручению Председателя Исполнитель должен сотрудничать с органами системы государственного управления, осуществляющими в установленном законом порядке контроль (надзор) в организациях общественного сегмента Республики Армения, а также со Счетной палатой Республики Армения с целью их поддержания и предоставления соответствующей информации.

4) Исполнитель должен проводить внутренний аудит посредством предоставления гарантий или консультационных услуг.

Задание по аудиту, назначенное для удостоверяющих услуг, выполняется на основе системного подхода посредством аудита соответствия или исполнительского аудита, или комбинации аудита соответствия и исполнительского аудита.

Аудит соответствия или правовой аудит предназначен для выявления соответствия деятельности Комиссии законам, иным правовым актам, а также другим условиям, относящихся к деятельности Комиссии (договоры, ведомственные нормативные акты и т. д.). В этом случае акцент делается не только на оценку эффективности различных процессов внутреннего контроля, но и на предоставлении руководству удостоверении о соответствии деятельности Комиссии законам, иным правовым актам и другим условиям.

Исполнительский аудит предназначен для оценки процессов с точки зрения бережливости, полезности и эффективности. Этот аудит исследует предоставление услуг с точки зрения этих трех характеристик. Он также может включать сравнение услуг с услугами, предоставляемыми аналогичными организациями, с точки зрения качества и стоимости.

Разноводностями комплексирования аудита соответствия и исполнительского аудита являются аудит оценки системы, финансовый аудит, аудит информационных технологий и другие аудиты.

## 4. ПРЕДОСТАВЛЯЕМАЯ УПОЛНОМОЧЕННЫМ ОРГАНАМ ИНФОРМАЦИЯ

Исполнитель Министерству финансов Республики Армения, как уполномоченному органу (далее - Уполномоченный орган), определенному Законом об аудиторской деятельности, должен предоставлять предусмотренную законодательством Республики Армения нижеследующую информацию о внутреннем аудите:

а/ информацию о нижеприведенных изменениях в течение 15 рабочих дней с момента вступления в силу этих изменений в случае проведения изменений в представленных для включения в опубликованном полномочным органом списке (согласно пункту 5 части 4 статьи 13 Закона «О внутреннем аудите») сведениях или документах, в том числе в документах Исполнителя или внутренних аудиторов, считающихся его работниками;

б/ предложения о необходимости переподготовки внутренних аудиторов и направленности программы переподготовки;

в/ к сведению – стратегический план, с внесенными в него изменениями согласно порядку, установленному законодательством о внутреннем аудите, в течение двух рабочих дней со дня утверждения;

г/ годовая программа следующего года до 1 января следующего года;

д/ отчет по форме 2, представленной в 9 приложении приказа Министра финансов РА от 17 февраля 2012 г. N 143-Н, в течение 5 рабочих дней после утверждения положения о внутреннем аудите или вступления в силу поправок.

е/ годовой отчет внутренного аудита до 1 марта следующего года;

ж/ утвержденные Комиссией проверочные листы внутренней оценки, перечень вопросов и внесенные в них изменения, в течение 5 рабочих дней после утверждения;

з/ результаты внутренней оценки, необходимые планы мероприятий и результаты их реализации, не реже одного раза в год, желательно вместе с годовым сводным отчетом.

## 5. ОБЩИЕ ТРЕБОВАНИЯ К ИСПОЛНИТЕЛЮ ВНУТРЕННЕГО АУДИТА

а/ Исполнитель должен состоять в ведомом Уполномоченным органом списке организаций, имеющих квалификацию по проведению внутреннего аудита в общественном сегменте;

б/ Аудиторы, привлеченные Исполнителем для оказания предусмотренных настоящей технической характеристикоя услуг, должны иметь квалификацию внутреннего аудитора общественного сегмента Республики Армения, иметь опыта работы не менее 3 лет в области аудита (внутреннего (или) внешнего), не работать по совместительству в организациях, предоставляющих услуги внутреннего и/или внешнего аудита или работать внутренним аудитором в других организациях;

в/ После составления годового плана внутреннего аудита и расчета требуемых человеческих ресурсов Исполнитель может при необходимости привлечь дополнительные рабочие ресурсы, соответствующие критериями, указанными в пункте (б). Для этого Исполнитель должен иметь достаточный человеческий ресурс, рассчитанный согласно установленным законодательством о внутреннем аудите правилом и в соответствии с критериями пункта (б), для надлежащей реализации стратегических и годовых планов, составленных по результатам оценки рисков элементов среды внутреннего аудита.

Исполнитель должен выполнять работы по внутреннему аудиту согласно требованиям законодательства Республики Армения о внутреннем аудите в соответствии со стандартами профессиональной деятельности внутреннего аудита Республики Армения и соблюдать правила поведения внутреннего аудитора.

***Согласно подписываемому договору, Исполнитель принимает на себя обязанности по предоставлению услуг внутреннего аудита Комиссии по телевидению и радио (руководствуясь «Стратегическим планом внутреннего аудита на 2026-2028 годы», утвержденным Комиссией по телевидению и радио), который охватывает период 2026 года.***

## 6. ГРАФИК ПРИЕМА УСЛУГИ И ОПЛАТЫ

**Срок действия подписываемого контракта не менее 12 месяцев,** в расчет которого не входят сроки, связанные с утверждением отчетов заказчиком.

Отчеты представляются каждые три месяца до 15 числа следующего первого месяца. К отчету прилагается приложение, указывающее характер и содержание, предоставленной в данный период услуги, результат ее документирования, а также письменное подтверждение того, что услуга была предоставлена трудовым ресурсом, соответствующего критериям, указанным в пункте 5 (б).

Отчет рассматривается, утверждается или возвращается Исполнителю с возрожениями в течение 10 рабочих дней после его получения. Отчет утверждается решением Председателя, на основании которого в течение двух рабочих дней после его принятия руководитель ответственного подразделения утверждает протокол приема-сдачи.

Оплата предоставленных услуг производится каждый раз при утверждении представленного отчета в течение установленного графиком платежей месяца, предусмотренного договором.

При этом, если срок действия договора не истекает в течение данного бюджетного года, то с целью обеспечения продолжения предоставления услуг, соглашением, заключаемым в следующем бюджетном году, предусматривается, что его требования применяются с 1 января на основании отношений, фактически установленных между сторонами, а оплата производится за счет ассигнований, предназначенных для приобретения услуг в этом году.

## 7. ТРУДОВЫЕ РЕСУРСЫ

Выбранный участник предоставляет письменное заверение, подписанную соответствующим работодателем гарантию и объявление об отсутствии ограничений, предусмотренных частью 4 статьи 9 Закона «О внутреннем аудите».

## 8. ПРОЧИЕ СВЕДЕНИЯ

1) Функции Комиссии определены статьями 196-го и 197-го Конституции РА, законом РА « Об аудиовизуальных медиа», решением Комиссии № 32-Л от 19-го февраля 2021 года «Об утверждении Устава Комиссии по телевидению и радио» и другими нормативно-правовыми актами;

2) Приглашением может быть установлено, что участник торгов к ценовому предложению представляет цены за единицу отдельных элементов услуги;

3) Исполнителю будут предоставлены копии разработанных и утвержденных подразделением внутреннего аудита Комиссии внутренних правовых актов, исходящие из законодательства о внутреннем аудите,

4) Исполнителю будут предоставлены годовые и трехлетние стратегические планы Комиссии.

5) Отношения, связанные с внутренним аудитом, регулируются, следующими правовыми актами:

1. Закон РА «О внутреннем аудите»
2. Решение Правительства РА № 1233-N от 11.08.2011г..
3. Указ Министра финансов РА № 974-N от 08.12.2011г..
4. Указ Министра финансов РА № 143-N от 23.02.2012г..
5. Указ Министра финансов РА № 165-N от 23.02.2012г..
6. Решение Правительства РА № 732-N от 31.05.2012г..
7. Указ Министра финансов РА №1050-N от 30.11.2012г..
8. Указ Министра финансов РА №1096-N от 12.12.2012г..
9. Решение Правительства РА № 896-N от 08.08.2013г..
10. Решение Правительства РА от № 176-N от 13.02.2014г..
11. Указ Министра финансов РА № 541-N от 21.08.2014г..

## 9. ПОДЛЕЖАЩАЯ ЗАПОЛНЕНИЮ ЗАКАЗЧИКОМ ТАБЛИЦА

| **НАИМЕНОВАНИЕ ЗАКАЗЧИКА / Комиссия по телевидению и радио** | | | | |
|---|---|---|---|---|
| **Единицы, подлежащие внутреннему аудиту** | | **Единицы, подлежащие внутреннему аудиту в течение отчетного периода** | | |
| **Наименование** | **Адрес** | **Наименование** | **Адрес** | **Группа риска** |
| Отдел мониторинга программ | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел мониторинга программ | г. Ереван, ул. Исаакяна 28 | чувствительный |
| Отдел контроля | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел контроля | г. Ереван, ул. Исаакяна 28 | чувствительный |
| Юридический отдел | г. Ереван, ул. Исаакяна 28 | Юридический отдел | г. Ереван, ул. Исаакяна 28 | средний |
| Лицензионный отдел | г. Ереван, ул. Исаакяна 28 | Лицензионный отдел | г. Ереван, ул. Исаакяна 28 | высокий |
| Отдел международных связей, связей с общественностью и развитию программ | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел международных связей, связей с общественностью и | г. Ереван, ул. Исаакяна 28 | средний |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | развитию программ | | |
| Секретариат | г. Ереван, ул. Исаакяна 28 | Секретариат | г. Ереван, ул. Исаакяна 28 | средний |
| Отдел финансов и бухгалтерского учета | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел финансов и бухгалтерского учета | г. Ереван, ул. Исаакяна 28 | высокий |
| Отдел управлениия кадрами | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел управлениия кадрами | г. Ереван, ул. Исаакяна 28 | средний |
| Отдел по управлению делами | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел по управлению делами | г. Ереван, ул. Исаакяна 28 | чувствительный |
| Отдел анализа и методологии эффективности аудиовизуальных медиа | г. Ереван, ул. Исаакяна 28 | Отдел анализа и методологии эффективности аудиовизуальных медиа | г. Ереван, ул. Исаакяна 28 | высокий |